Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի դասավանդողի թափուր տեղի համար:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

-դիմում (Ձև1),

-կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

-անձնագիր (բնօրինակը և պատճենը),

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (ձև4)

-մեկ լուսանկար՝ 3*4 չափի

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

-հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են 2024թ.փետրվարի 28-ից մինչև մարտի 13-ը ներառյալ,ամեն օր `ժամը 9:30-16-00,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. մարտի 18-ին՝ ժամը 12:00-ին, Սևանի բազմագործառութային պետական քոլեջում, հասցե՝ ք.Սևան, Նաիրյան 162:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0261) 2-41-77 (094) 53-73-93 հեռախոսահամարներով: